

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
ՑԵՂԱՆՎԱՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ՇՈՒՐՋ

**Բանալի բառեր (Keywords).** *ցեղանվանադրություն, մատենագրություն, բառակազմություն, տեղանվանական, էթնիկական հիմնաբառ*

Հայ մատենագրության մեջ վկայված ցեղերի, ազգերի կամ ժողովուրդների անուններն ըստ հայերենի բառակազմական միջոցների և ցեղանվանադրության սկզբունքների, կարելի է դասակարգել հետևյալ խմբերի մեջ՝

1. Պարզ կամ արմատական. սրանք բառային այն միավորներն են, որոնք հայերենում չեն բաժանվում առանձին մասերի:
2. Ածանցավոր՝ կազմված անվանական և ածանցյալ մասերից:
3. Բարդ. այս խմբի մեջ են ներառված այն կազմությունները, որոնք բաղկացած են մեկից ավելի անուններից և մասնիկներից՝ ա հոդակապով կամ առանց, և կամ հարադրավոր կապակցությունները:

1. Բառակազմական առումով անտրոհելի պարզ ցեղանունները հայ մատենագրության մեջ վկայված են ինչպես ուղիղ, այնպես էլ հոլովված ձևերով, հմմտ.՝ *հայ-ք* (հոգ., սեռ.՝ *հայոց*)՝ Կորիւն, ՄՀ<sup>1</sup>, հ. Ա, էջ 245, Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ 290, Եզնիկ Կողբացի, ՄՀ, հ. Ա, էջ 460, և այլն, *մար-ք* (հոգ., սեռ.՝ *մարաց*)՝ Կորյուն, ՄՀ, հ. Ա, էջ 235, Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ 356, Ագաթանգեղոս, ՄՀ, հ. Բ, էջ 1632, Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ

---

<sup>1</sup> ՄՀ – Մատենագիրք Հայոց մատենաշար, Անթիլիաս-Երեւան, 2003-2013 (շարունակելի):

1912 և այլն, *ղեկ-ք* (հոգ., սեռ.՝ *ղեկաց*)՝ Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 2057, 2059, Աշխարհացոյց Է դարու, ՄՀ, հ. Բ, էջ 2170, *գեկ, գեղ<sup>2</sup>-ք* (հոգ., սեռ.՝ *գեղաց*)՝ Եղիշէ, ՄՀ, հ. Ա, էջ 654, *յոյն-ք* (հոգ. սեռ.՝ *յունաց*)՝ Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ 290, Եղիշէ, ՄՀ, հ. Ա, էջ 527, 528, *հոն-ք* (հոգ., սեռ.՝ *հոնաց*, հայց.՝ *հոնս*)՝ Եղիշէ, ՄՀ, հ. Ա, էջ 530, Ղազար Փարպեցի, ՄՀ, հ. Բ, էջ 2321, *հրեայ-ք* (հոգ., սեռ.՝ *հրէից*)՝ Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ 298, Եղիշէ, ՄՀ, հ. Ա, էջ 563, Ագաթանգեղոս, ՄՀ, հ. Բ, էջ 1487, *ծաղ*՝ Ուխտանէս, ՄՀ, հ. ԺԵ, էջ 446, *ճեն-ք* (հոգ., սեռ.՝ *ճենաց*)՝ Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 1972, *մուգ-ք* (հոգ. սեռ.՝ *մուգաց*)՝ Ստեփանոս Տարանեցի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 758, 823 և այլն:

Հայ մատենագրության մեջ արմատական պարզ ցեղանունները, որպէս հիմնաբառեր, լայնորեն ներառված են տեղանվանական և անձնանվանական կազմություններում: Այսպիսի կազմությունների միջից ցեղանվանական հիմնաբառի դուրս բերումն ու ընդգծումը կարևոր է ինչպէս տվյալ կազմության, այնպէս էլ, առանձին վերցրած, ցեղանվան իմաստաբանության և ձևաբանական գործառույթների ուսումնասիրության տեսանկյունից, հմմտ.՝ *Հայ* > *Հայ-ք*՝ *Հայ-ա-ստան*, նաև՝ *հայեր* նշանակություններով, *Հայ-ոց* Ձոր՝ Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 1781, *Հայ-ա-թաղ*<sup>3</sup>, որպէս ածա-

<sup>2</sup> Երկաթագիր «Գ» և «Դ» տառերի շփոթի հետևանքով հայ մատենագրության մեջ շատ հաճախ *Գեկ, Գեղ* (*Գեղայք, Geloe*) ցեղի անունը դարձել է գոյություն չունեցող մի անուն՝ «Դեկ», (հմմտ.՝ Պատմութիւն Սեբեոսի Եպիսկոպոսի ի Հերակլին և սկիզբն նորագիտ պատմութեան Մխիթարաց Սնեցոյ. Ի լոյս ած Բ. Պատկանյան. Ս. Պետերբուրգ, 1879, էջ 147), ուր, սակայն, «Դեկ» անվան կողքին Պատկանյանը փակագծերում հարցակառնով դրել է «Գեկ» (Այս մասին տե՛ս Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Արգարյանի, Երևան, 1979, ծան.՝ 653, էջ 360-361):

<sup>3</sup> Հյուբշման Հ., Հին Հայոց տեղոյ անունները, թարգմ.՝ Հ. Պիլեզիկճեան, Վիեննա, 1907, էջ 367:

կան՝ հայ մարդ, հայ լեզու, հայ թուական<sup>4</sup>: Հետաքրքիր է հայկական ձևը = հայկական<sup>5</sup>, հետևաբար՝ *Հայ* = *Հայկ*<sup>6</sup> (այս մասին տե՛ս ստորև՝ էջ 5-7): *Մար* > Մար-մետ՝ Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 1922, Մահքր-Տան իշխանին՝ Ագաթանգեղոս, ՄՀ, հ. Բ, էջ 1706, բդեաշխն Աղձնեաց ...եւ Մահ-կերտանն<sup>7</sup> Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ 364 (Մահ ձևը հավանաբար մարական փոխառություն է, որ վկայված է ինչպես միջ. պարսկերենում, այնպես էլ՝ հայերենում վերոնշյալ կազմություններում)<sup>8</sup>, սկզբնական *Մադա* (իրանական *Māda*-) ձևը պահպանված է Նիքար Մադեխի՝ Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 1788, անվան մեջ<sup>9</sup>, Մայ՝ Թովմա Արծրունի, ՄՀ, հ. ԺԱ, էջ 128 (միջին պարսկերեն ձևը՝ հին իր. միջձայնավորային *-d-* > *-y-* անցմամբ)<sup>10</sup>:

<sup>4</sup> Հմմտ.՝ «Ջայս գրեցին *ասորի* եւ *հելլենացի* եւ *յոյն գրով* եւ *իսմայելացի նշանաւ*»՝ Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարաւոյ, ՄՀ, հ. Ե, էջ 1017:

<sup>5</sup> Տե՛ս Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 2, Երևան, 1981, էջ 29:

<sup>6</sup> Թեև *Հայկ*՝ հայ նշանակությամբ առանձին գործածություն չունի, այլ միայն բաղադրյալ կազմությամբ, հմմտ.՝ *Հայկազարմ*, *Հայկազեանք*, *Հայկազն*: Տե՛ս ՆՀԲ, հ. 2, էջ 31:

<sup>7</sup> Ուղիղ ձևն է *Մահկերտ-տուն*, հմմտ.՝ ասորերեն *Beḏ Mahqert*, որտեղ *իյ. տուն* = ասոր. *Beḏ*: Տե՛ս Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 181-182: *Մահկերտ-տունը* կոչվում էր նաև *Մարձին*, (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 64):

<sup>8</sup> Գևորգյան Հ., Հայ մատենագրության մեջ *մար* ցեղանվան վկայությունների և մեկ տարրնթերցման շուրջ, «Բանբեր Մատենադարանի», № 20, Երևան, 2014, էջ 58:

<sup>9</sup> Կանայան Ս., Մարաց գաւառ = Մարգեաւառ, «Արարատ», Ս. Էջմիածին, 1913, էջ 814:

<sup>10</sup> Հմմտ.՝ Ատրպատական – Ատրպայական՝ Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ 357: Փաստորեն, ըստ էության, հայերենում վկայված ունենք հին իրանական *Māda*- բառի հնչյունական երեք տարբեր զարգացում ապրած ձևեր՝ *մար*, *Մայ*, *Մահ*, ինչպես նաև հունական *medoi*-ից՝ *մեդ-ացի* ձևը:

2. Ածանցավոր են այն ցեղանունները, որոնցում ակնհայտորեն երևում են տրոհելի մասնիկներ:

Հայերենում լիովին մեկնելի և ընկալելի ցեղանվանակերտ ածանցներից առանձնացնում ենք հետևյալները՝

2.1. *-ացի/եցի/ցի*. այս ածանցը կցվում է տարբեր կազմության տեղանուններին և կազմում է էթնիկոններ՝ ցույց տալով տվյալ վայրի ներկայացուցիչ, հմմտ.՝ Ափրիկ-*եցի*-ք (հոգ. սեռ.՝ Ափրիկեցուց) < Ափրիկե՝ Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 1804, Բաբել-*ացի*-ք < Բաբելոն՝ -ոն-ի անկումով՝ Եզնիկ Կողբացի, ՄՀ, հ. Ա, էջ 448, Բիւզանդ-*ացի*-ք (հոգ. սեռ.՝ Բիւզանդացուց) < Բիւզանդիա՝ -իա ածանցի անկումով՝ Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 2046, Եգիպտ-*ացի*-ք (հոգ. սեռ.՝ Եգիպտացուց) < Եգիպտոս՝ -ոս- վերջածանցի անկումով՝ Եղիշե, ՄՀ, հ. Ա, էջ 644, Ելլադա-*ցի*-ք (հոգ. սեռ.՝ Ելլադացուց) < Ելլադա՝ Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 2061 և այլն:

Ի տարբերություն ժամանակակից լեզվի, գրաբարյան ձևերում -ստան վերջավորությամբ երկրանունների հետ-*ցի* ածանցի կցում չի նկատվում, հմմտ.՝ ժամ. հյ. հայաստանցի, վրաստանցի, չինաստանցի<sup>11</sup>: Այս շրջանին բնորոշ է -ստան վերջավորությանը *-եայ-ք* ածանցի կցումը, որ կարծես ունի բառակազմական միևնույն նշանակությունը, ինչ *-ստան-ցի* ձևը (տե՛ս ստորև՝ 2.6):

Երբ *-ացի* վերջածանցը կցվում է *-իա* վերջավորությամբ տեղանուններին, որոշ դեպքերում երկրանունների *-իա* վերջավորության *ի*-ն պահպանվում է, հմմտ.՝ Վերիա/Վերի-*ացի*-ք (հոգ. սեռ.՝ Վերիացուց)՝ Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 1860, Լիբիա/Լիբի-*ացի*-ք (հոգ. սեռ.՝ Լիբիացուց)՝ Խորենացի, ՄՀ,

---

<sup>11</sup> Ինչպես երևում է բերված օրինակներից, բաղադրություններն ունեն տվյալ երկրի բնակիչ (ոչ պարտադիր ազգային նույն պատկանելությամբ) բառակազմական նշանակություն: Տե՛ս Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 119:

հ. Բ, էջ 1860, Սպանիայ/Սպանի-*ացի*-ք (հոգ. սեռ.՝ Սպանիացուց)՝ Ագաթանգեղոս, ՄՀ, հ. Բ, էջ 1632 և այլն, այլ դեպքերում՝ Արաբիա/Արաբ-*ացի*-ք (հոգ. սեռ.՝ Արաբացուց)՝ Աշխարհացոյց, ՄՀ, հ. Բ, էջ 2145, Թրակիա/Թրակ-*ացի*-ք (հոգ. սեռ.՝ Թրակացուց)՝ Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 1891, այլն՝ Բիւզանդիա/Բիւզանդ-*ացի*-ք, Եթովպիա/Եթովպ-*ացի*-ք, Կեսարիա/Կեսար-*ացի*-ք և այլն:

-*ացի* վերջածանցը կազմում է էթնոնիմներ՝ կցվելով նախահոր կամ նախամոր անձնանվանը, հմմտ.՝ հագար-*ացի*-ք (հոգ. սեռ.՝ հագարացուց)՝ Սեբեոս, ՄՀ, հ. Դ, էջ 532՝ Հագարի անունից, Իսմայել-*ացի*-ք՝ Սեբեոս, ՄՀ, հ. Դ, էջ 467՝ Իսմայելի<sup>12</sup> անունից և այլն:

2.2 -*ի*. ոչ կենսունակ վերջածանց է, վկայված է *ասորի* ցեղանվան մեջ: Հ. Բեյլին այս վերջածանցը նույնացնում է քրիստոնեական սողդերենի անվանական հայցական -ī վերջավորության հետ<sup>13</sup>:

2.3. -*իկ* վերջածանցով վկայված ցեղանունները հայ մատենագրության մեջ բավականին զգալի թիվ են կազմում: Այս ածանցը հանգում է միջ. պ. -īk ձևին, նոր պ.-ում՝ -k -ի անկմամբ, հմմտ.՝ միջ. պ. pārsīk<sup>14</sup> > նոր. պ. pārsī կամ արաբականացված ձևը՝ fārsī (բայց միայն որպես լեզվի անվանում, այլ ոչ թե էթնոնիմ), հյ. պարս-*իկ*-ք (հոգ. սեռ.՝ պարսկաց)՝

---

<sup>12</sup> Հայ մատենագրության մեջ *Հագարացի* և *Իսմայելացի* են անվանվում արաբները: Ըստ Աստվածաշնչի՝ Հագարը Սառայի աղախինն էր, որը Աբրահամից ծնեց Իսմայելին, որն էլ դարձավ արաբների նախահայրը՝ ունենալով 12 որդի, որոնք դարձան արաբ ցեղապետեր: Տե՛ս Մեյթի-խանյան Փ., Աստվածաշնչի և Հայոց սուրբ անվանց բառարան, Երևան, 2001, էջ 206, 242-43:

<sup>13</sup> Harold W. B., Iranica, Opera Minora. vol 1, Shiraz, Iran, 1981, p. 9.

<sup>14</sup> Պահլավական տեքստերում վկայված pārsīk ձևը նշանակում է ինչպես «Ֆարսի լեզու», այնպես էլ «Ֆարս նահանգի բնակիչ»: Հայերենում պահպանված *պարսիկ* ձևը հանդես է գալիս միայն որպես ցեղանուն:

Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ 305, 356, Եղիշէ, ՄՀ, հ. Ա, էջ 608-609, ինչպէս նաև՝ հնդ-իկ-ք (հոգ. սեռ.՝ հնդկաց)՝ Եզնիկ Կողբացի, ՄՀ, հ. Ա, էջ 473, Ազաթանգեղոս, ՄՀ, հ. Բ, էջ 1632, դելմ-իկ-ք, դելեմ-իկ-ք (հոգ. հայց.՝ գԴելմիկսն<sup>15</sup>)՝ Վարդան Վարդապետ, Պատմութիւն, Վենետիկ, 1862, էջ 95, Մովսէս Կաղանկատուացի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 416 = միջ. պրսկ. \*dēlumik, որից՝ նոր պ. Dēlam, Dēlamī (դելլամական), յարձակումն Դելմկացն, ի գօրաց Դելմկաց՝ Թովմա Արծրունի, Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 302, Պահլաւ-իկ-ք (հոգ. սեռ.՝ Պահլաւկաց), Պահղաւ-իկ՝ Մովսէս Կաղանկատուացի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 149, Ստեփանոս Տարանեցի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 657, Թովմա Արծրունի, ՄՀ, հ. ԺԱ, էջ 98, 138, Բասլ-իկ-ք (բասիլք, հոգ. սեռ.՝ բասլաց)՝ Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 1949, 1980, Աշխարհացոյց է դարու, ՄՀ, հ. Ա, էջ 2170, ռուզ-իկ՝ Մովսէս Կաղանկատուացի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 416, գերման-իկ-ք՝ Ուխտանէս, ՄՀ, հ. ԺԵ, էջ 481, ծաւդ-իկ-ք՝ Յաղագս աշխարհագրութեանց, ՄՀ, հ. Բ, էջ 2191, թուխար-իկ-ք՝ Յաղագս աշխարհագրութեանց, ՄՀ, հ. Բ, էջ 2191, արմեն-իկ-ք՝ Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 1787, Վրկան-իկ-ք՝ Փիլոն Տիրակացի, Ժամանակագրութիւն, ՄՀ, հ. Ե, էջ 909:

-իկ վերջածանցով որոշ ցեղանուններ զուգահեռաբար ունեն նաև առանձին, արմատական ձևերով վկայություններ, ինչը հաճախ ցույց է տալիս այս ածանցի երկրորդական բնույթը, հմմտ.՝ *պարսիկ* < Պարս - Պարս-ք՝ Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ 286 (հոգ. սեռ.՝ Պարսից աշխարհ, կողմանք, իշխանութիւն՝ Կորիւն, ՄՀ, հ. Ա, էջ 252, Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ 296,

---

<sup>15</sup> Ռուսերէն տարբերակում Էմինը թարգմանում է. «... Ростомъ ... взявшій Дельмись ...» (Всеобщая Исторія, Вардана Великаго. перевелъ Н. Эминъ, Москва, 1861, стр. 119)՝ ընդունելով որպէս առանձին սեղանուն, ինչը սխալ է, քանի որ այստեղ խոսքը վերաբերում է ժողովրդին, սե՛ս Վարդան Վարդապետ, Պատմութիւն, Վենետիկ, 1862, ծան.՝ 1, էջ 95:

Եղիշէ, ՄՀ, հ. Ա, էջ 578 այլն) կազմություններում, նմանապես՝ *դելմիկ* < Դելմ-ք, Դելմ-ա-ստան<sup>16</sup> կազմություններում, *ռուզիկ* < ռուզ – Ռուզ-ք Ստեփանոս Տարանեցի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 758 (հոգ. սեռ.՝ Ռուզաց ազգ, թագաւոր՝ Ստեփանոս Տարանեցի, էջ 823), *բասլիկ* < բասիլ և այլն:

-իկ վերջածանցի նախնական գործառույթը հավանաբար նույնն է, ինչ հայերեն –*եցի*/*-ացի*/*-ցի* վերջածանցինը՝ տեղանուններից կազմել ծագումը մատնանշող ցեղանուններ (էթնիկոններ), հմմտ.՝ *Դլմիկ/Դելեմիկ*՝ Դելլամից կամ դելլամցի, *Խորասանիկ*՝ Խորասանցի կամ Խորասանից և այլն<sup>17</sup>: Հայերենում, սակայն, այս ածանցի տվյալ գործառույթը մթագնված է, և այն էթնիկական հիմնաբառի հետ միասին ընկալվում է որպես մեկ ամբողջություն՝ պահպանվելով վերոնշյալ ցեղանուններում, ինչպես նաև՝ քարացած *հնդիկ* ձևում, որտեղ -իկ վերջածանցի անկում չի նկատվում, ի տարբերություն *պարսիկ* ձևի, հմմտ.՝ *հնդիկ* – *Հնդկին* (Եզնիկ Կողբացի, ՄՀ, հ. Ա, էջ 473), *Հնդկաւք* (Աշխարհացոյց, ՄՀ, հ. Բ, էջ 2140), *Հնդկաց* (Աշխարհացոյց, ՄՀ, հ. Բ, էջ 2157) և ոչ, օրինակ, \**հնդից*: Այս հանգամանքը, թերևս, բացատրվում է նրանով, որ վերջինիս պարագայում չունենք արմատական *Հինդ* ձևից առանձին տեղանվանական կամ այլ տիպի կազմությունների վկայություններ:

---

<sup>16</sup> Ստեփանոս Տարանեցի, Պատմութիւն Տիեզերական, հրատ. Սո. Մալխասեանցի, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 188:

<sup>17</sup> Նման կիրառություն ունի նաև -*եան* վերջածանցը, որը, սակայն, միանում է անձնանուններին և ցույց է տալիս տվյալ անձի ճյուղին, ցեղին պատկանելը՝ ձեռք բերելով ցեղանվան նշանակություն, հմմտ.՝ «... որ նախ զմերազնեայս յիւր անուն *Ասքանազեան* անուանեաց»՝ Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, ՄՀ, հ. ԺԱ, էջ 362, 363: Սրան համապատասխանում է ժամանակակից հայերենի –*յան* վերջածանցը, որ կիրառվում է ազգանունների կազմության մեջ:

Յեղանվանական նմանատիպ կազմություններում *-իկ* վերջածանցը մեծ կայունություն է դրսևորել *պարսիկ, հնդիկ* և *ղլմիկ* ձևերում, որոնք գործածական են մինչև այժմ: Երբ այսպիսի ձևերին ավելանում են վերջավորություններ, *-իկ* վերջածանցի միջբաղաձայնային *ի*-ն սղվում է, հմմտ.՝ *պարսիկ* – Պարսկաստան, պարսկային, պարսկական, *հնդիկ* – Հնդկաստան, հնդկական և այլն: Այսպիսի կազմությունների հետ *հայկական* ձևի (տե՛ս վերը՝ էջ 2, ծան. 5, 6) զուգադրումը լիովին թույլ է տալիս ենթադրել, որ հնագույն շրջանում *հայ* ձևին զուգահեռ գոյություն է ունեցել նաև *\*հայիկ* ձևը, որ պահպանվել է վերոնշյալ՝ *հայկական* կազմության մեջ: Այլապես, ինչպե՞ս կարելի է բացատրել *հայկական* բառի մեջ առաջին *կ*-ի առկայությունը: Տվյալ կազմության մեջ որպես հիմնաբառ-արմատ, անշուշտ, պետք է ընդունել *հայ* ցեղանունը, իսկ դրան հաջորդող *կ* բաղաձայնը ոչ այլ ինչ է, եթե ոչ *-իկ* վերջածանցը՝ միջբաղաձայնային *ի*-ի սղմամբ, հմմտ.՝ պարսկական, հնդկական: Այս վարկածը, փաստորեն, հաստատվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ և նաև հետագա այլ աղբյուրներում պահպանված տվյալներով, համաձայն որոնց *հայ* և *Հայկ* անունների ծագումը կապվում է միմյանց հետ, հմմտ.՝ «*Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք*»՝ Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 1781, «*Իսկ երկիրն ըստ նմին պատշաճի կոչեցաւ անուն Հայք, որ են հայազամբք հանդերձ*»՝ Սեբեոս, ՄՀ, հ. Դ, էջ 454, ընդ որում, ինչպես նկատում է Գ. Սարգսյանը<sup>18</sup>, երկրորդ ձևակերպումն ավելի հարուստ է, քանի որ երկրանվան հետ մեկտեղ ընդգրկում է և *հայ* ցեղանունը: Այս ավանդության մեջ գլխավորն այն է, որ այս երկու անունները (*հայ* և *Հայկ*) կապվում

<sup>18</sup> Տե՛ս Սարգսյան Գ., Հատուկ անունների ստուգաբանությունը Մովսես Խորենացու Պատմության մեջ, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1998, № 2, էջ 123:



են միմյանց հետ<sup>19</sup> և բնավ կարևոր չէ այն, որ տվյալ նկարագրության մեջ *Հայկ* անունից է առաջացած համարվում *հայ* ցեղանունը կամ *Հայք* երկրանունը: Սա կարող է ավանդության գեղարվեստական մասն ապահովող նկարագրություն լինել, այսինքն՝ կապել ժողովրդանունը նախահոր անվան (Էպոնիմ) հետ: Իրականում ստացվում է, որ *Հայկ* անունն է առաջացած *հայ* ձևից, որ ընդամենը վերջինիս ածանցված ձևն է՝ \**հայիկ* > *Հայկ*՝ *յ* կիսաձայնի առկայությամբ և շեշտազրկված *ի*-ի սղմամբ: Կարծում ենք, որ, բացի շեշտադրությունից, այստեղ *ի*-ի անկման հարցում ոչ պակաս դեր է ունեցել նաև *յ* կիսաձայնը (բաղաձայնական ձայնավոր), որ հայերենում միևնույն հնչյունն է, ինչ *ի* ձայնավորը. երկուսի արտաբերության տեղը միևնույնն է և երկուսն էլ միևնույն ուրակն ունեն ու իրարից տարբերվում են միայն իրենց ուժով. *յ* հնչյունը թույլ *ի* ձայնավոր է<sup>20</sup>, և այստեղ *ի* ձայնավորի սղմամբ, փաստորեն, պայմանավորվում է ոչ միայն շեշտազրկմամբ, այլև թույլ *ի* հնչյունի (*յ*) առկայությամբ, որը պարզապես կոմպենսացնում է *ի* ձայնավորի բացակայությունը: *Հայկ* ձևն այնուհետև ամրագրվում է լեզվում որպես Էպոնիմ, հետագայում կիրառվելով նաև՝ որպես արական անձնանուն և ունենալով իմաստաբանական առանձին զարգացում: Հակառակ պարագայում, եթե մերժենք կամ անտեսենք *հայ* և *Հայկ* անունների ծագումնաբանական կապը<sup>21</sup>, ապա պետք է

---

<sup>19</sup> Գազիկ Սարգսյանն այս առնչությամբ նշում է. «Որքան մեզ հայտնի է, «*հայ*» ցեղանվան և «*Հայկ*» անձնանվան կապը բոլորի կողմից ընդունված լինելով հանդերձ, նրանց լեզվաբանական փոխառնչությունը դեռևս գիտականորեն համոզիչ կերպով բացատրված չէ» (տե՛ս Սարգսյան Գ., նշվ. աշխ., էջ 123):

<sup>20</sup> Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Երևան, 1974, էջ 75:

<sup>21</sup> Համենայն դեպս, Հ. Աճառյանին *Հայկ* անվան ծագումը հայտնի չէ, և նա այս անունը չի կապում *հայ* բառի հետ: Բայց, այնուամենայնիվ, վերջինս մեջբերում է Մովսես Խորենացու տողերը. «*Հայկի* անունով կոչվել է մեր

փաստենք լեզվաբանության մեջ մի ֆենոմենի մասին, երբ գոյական անունին (տվյալ դեպքում՝ *հայ*) ավելանալով վերջավորություն (*ական*)՝ տվյալ բառը փոխարինվում է մեկ այլ բառով (տվյալ դեպքում՝ *Հայկ*), հմմտ.՝ *հայ + -ական = հայկական*, փոխարենը՝ *հայական*<sup>22</sup>, ինչն անհավանական է ու անտրամաբանական և չի զուգադրվում որևէ այլ դեպքով<sup>23</sup>, հմմտ.՝ *մար – մարական*, *ռու – ռուսական*, այլ ոչ օրինակ՝ *\*ռուսկական*, թեև այս պարագայում *ռուզիկ* ձևի վկայված լինելը հայ մատենագրության մեջ լիովին թույլ է տալիս ենթադրել այսպիսի մի կազմության հնարավորություն ևս: Ինչն է, հայերենում մեկ այլ ձև, որ կարելի է համեմատության մեջ տեսնել *հայ – հայկական* ձևի հետ, *մարդ – մարդկային* ձևն է: Այս ձևերի զուգադրումը միանգամայն խոսում է մեր տրամաբանության օգտին և թույլ է տալիս *հայկական* ձևի մեջ տեսնել *-իկ* ածանցը՝ ձայնավորի սղմամբ, հմմտ.՝ *մարդկային* > *մարդ + իկ*<sup>24</sup> + ային = *հայկական* > *հայ + \*իկ* + ական, որտեղ՝

ծողովուրդը՝ *հայ* և մեր երկիրը՝ *Հայաստան*» (տե՛ս ԱՃառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Գ. Երևան, 1948, էջ 31): Գ. Ջահուկյանը, սակայն *հայ* և *Հայկ* բառերի ստուգաբանական սկզբնական իմաստները պարզելու համար համադրում է այդ անվանումների նշանակությունները՝ փաստորեն, չանտեսելով դրանց ծագումնաբանական կապը: Նա նույնպես մեջբերում է Մովսես Խորենացու հիշյալ հատվածը *հայ* անվանման ծագման վերաբերյալ ավանդությունների շարքում (տե՛ս Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 279-280):

<sup>22</sup> Այսպիսի ձևի վկայություն բերում է ՆՀԲ-ն (տե՛ս վերը՝ ծան. 5), մինչդեռ սա ունի եզակի գործածություն:

<sup>23</sup> Քանակական *մեկ* թվականի՝ դասականի վերածվելու դեպքում տեղի է ունենում մի բառի փոխարինում՝ մեկ այլ բառով, որ բացարձակապես չի կարելի համարել անալոգ այս դեպքի համար: Այս երևույթը առկա է նաև այլ լեզուներում, հմմտ.՝ *հյ.*՝ մեկ – առաջին, *ռու.*՝ *один – первый*, անգլ.՝ *one – first*, արաբ.՝ *wahid – awwal* և այլն:

<sup>24</sup> Չնայած *մարդիկ* բառի մեջ *-իկ*-ը ոչ թե վերջածանց է, այլ հոգնակերտ վերջավորություն, որ հատուկ է միայն այս ձևին և չի հանդիպում որևէ այլ

մարդ = հայ, -իկ = -իկ և -ային = -ական, ընդ որում –ային և -ական ածանցները համանիշ են, ունեն բառակազմական միևնույն նշանակությունը և ցույց են տալիս նախատիպ գոյականով բնորոշվող հատկանիշ<sup>25</sup>: Այսպիսով, հայ և Հայկ բառերի ծագումնաբանական կապը չըջանցելն ու դա լեզվական հարանման տվյալների զուգադրմամբ հիմնավորելը ևս մեկ անգամ փաստում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» գիտական արժանիքներից մեկը, այն է՝ հատուկ անունների խորենացիական մեկնության արժանահավատությունը<sup>26</sup>:

2.4 -իճ վերջածանցը հանգում է վաղ միջին իրանական –*ē/īc* ցեղանվանակազմ ձևույթին, հմմտ.՝ \*Ատրպատ-իճ-ք (հոգ. սեռ.՝ Ատրպատճաց)՝ Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ 389, \*Բադաս-իճ-ք<sup>27</sup> (հոգ. սեռ.՝ Բադասճաց<sup>28</sup>)՝ Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ

բառում, այնուամենայնիվ, զուտ ձևային տեսանկյունից միանգամայն համեմատելի է մեր դեպքի հետ:

<sup>25</sup> Տե՛ս Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 132, տե՛ս նաև՝ Գալստյան Ա., նշվ. աշխ., էջ 81:

<sup>26</sup> Հատուկ անունների խորենացիական մեկնությունները քննված են Գագիկ Սարգսյանի (տե՛ս Սարգսյան Գ., նշվ. աշխ., Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1998, № 2, էջ 113-128, № 3, էջ 85-98), ինչպես նաև Լավրենտի Հովհաննիսյանի մոտ (տե՛ս Հովհաննիսյան Լ., Հատուկ անունների մեկնությունները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, Երևան, 2013, էջ 5-46), ուր, սակայն, Լ. Հովհաննիսյանը չի անդրադառնում *հայ* և *Հայկ* անուններին:

<sup>27</sup> Ն. Ադոնցը -իճ ածանց է տեսնում նաև *Կորճայք/Կորճէք* տեղանվան մեջ, որը առաջացած է համարում \**Կորտիճ-այք* ձևից, ուր \**կորտիճ* = *քուրդ* (տե՛ս Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում (քաղաքական կացությունը ըստ նախարարական տոհմերի), Երևան, 1987, ծան. 3, էջ 464): Նշենք, սակայն, որ, ըստ Գ. Ասատրյանի, \**կորտիճ* < *kurtioi* > *քուրդ* առաջացումը որքան էլ հավանական է, այնուամենայնիվ, չի ենթադրում այս երկու ժողովուրդների զենետիկ կապ (տե՛ս Asatrian G., *The origins of the Kurds, Iran & Caucasus*, vol. 1, 1997, p. 3):

<sup>28</sup> Այս անունը «Մատենագիրք Հայոց»-ում վերականգնված է *Բադասճիք* ձևով և տրված է անձնանունների և տոհմանունների ցանկում (հմմտ.՝ ՄՀ,

284, 285: Այս ածանցը վկայված է նաև Գիլանի հարավում գտնվող *Լահիջան* քաղաքի և ներկայիս Ադրբեջանի Հանրապետության *Լահիջ* բնակավայրի, ինչպես նաև *Թավրիզ* (հյ.՝ *Թաւրէժ*, *Թաւրէժ*<sup>29</sup>, *Դավրէժ*), *Կամբէճք*<sup>30</sup> (*Կամբիճան*՝ գավառ Կովկասյան Աղվանքում)՝ Մովսէս Կադանկատուացի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 85, 378, անունների մեջ: Հայ մատենագրության մեջ *Լահիջ* անունը վկայվել է Աղահ-էճ-ք<sup>31</sup> ձևում՝ Սյունիքի գավառներից՝ Աշխարհացոյց, ՄՀ, հ. Բ, էջ 2153: Այս անվան նախատիպ հիմքն է *լահ*<sup>32</sup> ցեղանունը:

---

հ. Բ, էջ 2515), ինչը, կարծում ենք, սխալ է՝ երկու տեսանկյունից. նախ, Բուզանդը այս անունը հիշատակում է կովկասյան մի շարք ազգությունների համատեքստում՝ հոլովված ձևով, հմմտ.՝ «...թագաւորն Մազքթաց Սանէսան ... ժողովեաց զամենայն զաւրս Հոնաց եւ Փոխաց, Թաւասպարաց, Հեճմատակաց, Իժմախաց, Գաթաց եւ Գղուարաց, Գուզարաց, Շչբաց եւ Ճղբաց եւ Բաղասճաց եւ Եգերսուանացն, եւ այլոց խառնիճադանճ բազմութեամբք, ... իշխէր զաւրացն բազմաց»՝ Բուզանդ, էջ 284, հետևաբար *Բաղասիճք*-ը պետք է ներառվի ոչ թե անձնանունների և տոհմանունների, այլ տեղանունների և ցեղանունների ցանկում: Երկրորդ, հոլովված *Բաղասճաց* ձևի ուղիղ ձևը պետք է դնել ոչ թե \**Բաղասճիք*, այլ՝ \**Բաղասիճք*, որովհետև այստեղ ակնհայտորեն առկա է *-իճ* ածանցը և հետո՝ որպեսզի բառը վերականգնվի *Բաղասճիք*, դրա հոգնակի սեռականը պետք է լինի ոչ թե *Բաղասճաց*, ինչպես որ վկայված է բնագրում, այլ՝ *Բաղասճոց*, հմմտ.՝ Ասորիք – Ասորոց, Վերիացիք – Վերիացոց:

<sup>29</sup> Հայ մատենագրության մեջ այս անվան առաջին հիշատակությունը պահպանվել է Փավստոս Բուզանդի մոտ, տե՛ս Փաւստոս Բուզանդ, ՄՀ, հ. Ա, էջ 357:

<sup>30</sup> Նաև համանուն գետ «Աշխարհացոյց»-ում՝ *Կամբէճ*, այժմ՝ *Իոբա* կամ *Իոբի* (տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., Երևան, 1963, էջ 54, 57):

<sup>31</sup> Հմմտ.՝ Ն. Ադոնց, որ մասնավորապես գրում է. «Աղահէճք, ըստ երևույթին, առաջ են եկել այն փոքրիկ ժողովրդից, որի մնացորդները այժմ կոչվում են լահիճ և բնակվում են Դաղստանի հարավային մասերում» (տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., ծան. 2, էջ 471):

<sup>32</sup> Լահերն ամենայն հավանականությամբ պատկանել են մերձկասպյան շրջանի նախաիրանական ցեղախմբերից մեկին (Տե՛ս Асагрян Г., Этническая композиция Ирана, Ереван, 2012, стр. 19):

2.5 *-ճիկ* վերջածանցը հանդիպում է մի քանի ցեղանուններում, հմմտ.՝ տա-*ճիկ* (հոգ. սեռ.՝ տաճկաց)՝ Սեբեոս ՄՀ, հ. Դ, էջ 563 Թովմա Արծրունի, ՄՀ, հ. ԺԱ, էջ 142: Ըստ Հյուբշմանի, *տաճիկ* բառը ծագում է արաբական *طَيِّب* (Տաի՛) ցեղանունից՝ իր. *-čik* վերջածանցի կցմամբ<sup>33</sup>, հմմտ.՝ հյ. տաճիկ = պիլվ. *tāčik*, պրսկ. *tāzi*: *-ճիկ* վերջածանցը հանդիպում է նաև հյ. *սագճիկ* = նոր պրսկ. *sagzi* < հին պրսկ. *Saka* «սակ»՝ և *ռաճիկ* (Ռաժի՛կ) = նոր պրսկ. *rāzi* ձևը, որ հավանաբար կարելի է տեսնել Մանաճիհր *Ռաժիկի*՝ Ներսես Բագրեւանդցի, ՄՀ, հ. Գ, էջ 419, հմմտ.՝ «Յառաջին ամի սորա սուրբն Մանաճիհր, որ անուանեցաւ Գրիգոր, *ագգաւ ռաժիկ*»՝ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 41, վկայաբան Ներսես *Ռաժիկի* անուններում: Այս ածանցն ունի «ինչ-որ տեղանքի բնակիչ» բառակազմական նշանակություն, հմմտ.՝ Ռաժիկ = Ռագայի (Ռէյ) բնակիչ, ծնունդ, սագճիկ = Սակաստանի (Սիստան) բնակիչ<sup>34</sup>:

2.6 *-ք* հոգնակիակերտ ցուցիչը, կազմության մեջ մտնելով երկրանունների (տեղանվանակերտ *-ստան* վերջածանցով), *-ստան* + *-եսյ* ածանցների, ինչպես նաև *-ական*, *-եան*, վերջածանցների հետ, ցույց է տալիս որևէ երկրին, իմբին, ժողովրդին պատկանող մարդկանց հավաքականություն և ձեռք է բերում ցեղանվան իմաստ<sup>35</sup>:

<sup>33</sup> Հյուբշման Հ., Հայերենի քերականություն, Երևան, 2003, էջ 86, 87: *Տաճիկ* անվան մասին մանրամասն տե՛ս Գևորգյան Հ., *Տաճիկ* անվան նշանակությունները հայ մատենագրության մեջ, Հայաստանը և արաբական աշխարհը. պատմություն և արդի խնդիրներ (երիտասարդական միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու), Երևան, ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2014, էջ 24-33:

<sup>34</sup> Հմմտ.՝ սողդերենում հանդիպող *ֆռուչիկ* ձևը, որ նշանակում է «Հռոմի բնակիչ, հռոմեացի» (Տե՛ս Асартян Г., նշվ. աշխ., Ереван, 2012, стр. 19).

<sup>35</sup> Բացի վերոնշյալ գործառույթից, *-ք* հոգնակիակերտը գործուն կերպով ներառված է ազգագավառների անվանումներում և համապատասխանում է իրանական *-ան* վերջավորությանը, որ վկայված է բազմաթիվ տե-

Տեղանվանակերտ *ա-ստան* ածանցով և *-ք* հոգնակիակերտով գեղանվանական կազմություններ են՝ Թուրք-*ա-ստան-ք*՝ Աշխարհացոյց, ՄՀ, հ. Բ, էջ 2150, Հոն-*ա-ստան-ք* Մովսէս Կաղանկատուացի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 305: *-ստան* + *-եայ*<sup>36</sup> + *-ք* կազմության ձևեր են՝ Խուժ-*ա-ստան-եայ-ք* (հոգ. սեռ.՝ Խուժաստանեայց)՝ Գրիգոր Մագիստրոս, Թուրքք եւ Չափաբերականք, ՄՀ, հ. ԺԶ, էջ 224, Պարսկ-*ա-ստան-եայ-ք* (հոգ. գործ.՝ Պարսկաստանեայք)՝ Ստեփանոս Տարանեցի, Պատմութիւն Տիեզերական, ՄՀ, հ. ԺԵ, էջ 821, Թուրք-*ա-ստան-եայ-ք* (հոգ. սեռ.՝ Թուրքաստանեայց)՝ Մովսէս Կաղանկատուացի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 247, Հայ-*ա-ստան-եայ-ք*՝ Մովսէս Կաղանկատուացի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 401: Քննարկվող վերջածանցը կազմության մեջ է մտնում նախատիպ հիմք (ցեղանուն, անձնանուն) + *-ական*, *-եան* ածանցների հետ, հմմտ.՝ Յուն-*ական-ք*՝ Յովհաննէս Դրասխանակերտցի, ՄՀ, հ. ԺԱ, էջ 516, Գրիգոր Մագիստրոս, Մեկնութիւն Քերականին, ՄՀ, հ. ԺԶ, էջ 386, Սաքանագ-*եան-ք*՝ Յովհաննէս Դրասխանակերտցի, ՄՀ, հ. ԺԱ, էջ 362, 493: *-ք* վերջածանցը կցվում է նաև անձնանվան ուղիղ ձևին՝ կազմելով ցեղանուն, հմմտ.՝ «Հանապազ գրպարտողք և սպանողք են յուղայքն<sup>37</sup>»:

3. Ցեղանվանական կազմությունների բարդ ձևերը բաղկացած են մեկից ավելի անվանական մասերից և ածանցներից: Բարդ ցեղանունների մեջ առանձին խումբ են կազմում

---

ղանուններին, հմմտ.՝ Գիլան = \*Գիլք = հյ. Գեղք, Լահիջան = \*Լահիջք = հյ. Աղահեճք և այլն:

<sup>36</sup>-*եայ* ածանցը համապատասխանում է ժամանակակից հայերենի *-յա* ձևին, որ ցույց է տալիս ինչ-որ ուղղության հետևորդ, հմմտ.՝ քրիստոնյա: Ընդ որում, ժամանակակից հայերենում *-յա* ձևը փոխվում է իր հին ձևին, երբ նրան ավելանում են *-ական*, *-աբար*, *-ություն* վերջածանցներ՝ քրիստոնյա + ական = քրիստոնեական, հմմտ.՝ քրիստոնեություն, քրիստոնեաբար, բայց՝ քրիստոսաբար և այլն (Տե՛ս ԵԶԲ, հ. 2, էջ 1015; Տե՛ս նաև՝ Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 209, 213):

<sup>37</sup> ԵԶԲ, հ. 2, էջ 373:

հարադրավոր կապակցությունները: Հայերենի ցեղանվանակերտ հիմնական բառաշերտն են կազմում հետևյալ հասարակ անունները՝ *ազգ, ազն, զարմ, ցեղ, ծնունդք, որդիք, զավակ, ժողովուրդ*:

Հարադրավոր կազմությամբ ցեղանուններում այս բառերին կցվող հատուկ անունները լինում են նախադաս և ետադաս:

3.1 Հատուկ անունը նախադաս է՝

3.1.1. ցեղանուն (եզ. թ., ուղղ. հ.), անձնանուն (եզ. թ., ուղղ. հ.), երկրանուն (եզ. թ., ուղղ. հ.) + ազգ, հմմտ.՝ *թուրք ազգն՝ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ 1898, էջ 59, «Քանզի յուղայ ազգէն սերէր անուն յուղայական, այսինքն հրեական<sup>38</sup>», Հայաստան ազգ. «ի գիտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել»՝ Կորին, ՄՀ, հ. Ա, էջ 236, «ի տեղիս տեղիս Հայաստան ազգին»՝ Կորին, էջ 241, *զՀայաստան ազգս՝ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 24*:*

3.1.2. ցեղանուն (հոգ. թ., սեռ. հ.) + ազգ, ցեղ, հմմտ.՝ Լատինացոց ազգ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ 1898, էջ 253:

3.1.3. ցեղանուն կամ անձնանուն + *-եան, -ական* վերջածանց + *ժողովուրդք, ազգ, ծնունդք, զավակ*, հմմտ.՝ «լինէր նշան որպէս *Իսրայէլեան ժողովուրդոցն*»՝ Ղազար Փարպեցի, ՄՀ, հ. Բ, էջ 2364, *Հեփթաղական ազգ՝ Մովսէս Կաղանկատուացի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 78, Սւքանազեան ազգ՝ Կորին, ՄՀ, հ. Ա, էջ 264, Յարեթական ծնունդք՝ Մովսէս Կաղանկատուացի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 37, «Ծնունդք Նոյական ազգին հեռացան ի պահոցն պնդութենէ...»՝ Յովհան Մանդակունի, Ճառք, ՄՀ, հ. Ա, էջ 1170, *Սւքանազեան զաւակ՝ Մովսէս Կաղանկատուացի,**

---

<sup>38</sup> Տե՛ս նույն տեղում:

ՄՀ, հ. ԺԵ, էջ 65, *յարեւմտական ազգէն՝* Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 60:

3.2. Հատուկ անունը ետադաս է՝

3.2.1 *ազգն, որդիքն* + անձնանուն (եզ. թ. սեռ. հ.), ցեղանուն (հոգ. թ., սեռ. հ.), հմմտ.՝ *ազգն Հագարու, որդիքն Հագարու՝* Մովսէս Կաղանկատուացի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 227, 229, *որդիքն Մահմետի՝* Գագիկ Բագրատունի, Գիր Հաւատոյ, ՄՀ, հ. ԺԶ, էջ 672, *ազգն Աբրահամու՝* Փիլոն Տիրակացի, ՄՀ, հ. Ե, էջ 908, *ազգն Պահղաւկաց՝* Ուխտանէս, ՄՀ, հ. ԺԵ, էջ 486, *ազգն Փռանկաց՝* Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 202, *ազգն Տաճկաց, ազգն Մարմատացոց, ազգն Վրաց՝* Ստեփանոս Տարանեցի, Պատմութիւն Տիեզերական, ՄՀ, հ. ԺԵ, էջ 758, *ազգն Հռոմկմայեցոց՝* որ անուանին Փռանգք՝ Մեսրոպ Վայոցճորեցի, Պատմութիւն սրբոյն Ներսիսի, ՄՀ, հ. ԺԱ, էջ 719, *ազգն Հայոց՝* Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 63:

3.2.2. *ծնունդ* + անձնանուն + *-եան*, *ազգ* + ցեղանուն + *-ական*, հմմտ.՝ *զծնունդս հագարեան՝* Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, Երևան, 1983, էջ 102, *ազգ մի սկիւթական՝* Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 145:

Հայ մատենագրության մեջ վկայված են նաև փոխառյալ հարադրավոր կապակցություններ, որոնց մի բաղադրիչը ցեղանուն է, իսկ մյուսն ակնհայտորեն ունի նկարագրական նշանակություն փոխատու լեզվում, հմմտ.՝ «Որ ըստ հիւսիսոյ են ազգ Թուրքաց եւ Բուլղարաց, ըստ անուանց գետոցդ կոչեցեալ, *Կուփի Բուլղար, Դուչի Բուլկար, Ողխոնտոր Բլկար եկն, Չղար Բուլկար.* աստար այժմ ի Պտղոմէականէն են այս անուանք<sup>39</sup>»՝ Աշխարհացոյց, ՄՀ, հ. Բ, էջ 2149:

<sup>39</sup> «Աշխարհացոյց»-ում հիշատակվող բուլղարական չորս ցեղանունների ստուգաբանությունն է տալիս Վ. Բուտբան «Աշխարհացոյց»-ի բուլղարա-



Յեղանվանակազմության տարածված ձև է բառաբարդու-  
մը: Վերոնշյալ հարադրավոր կապակցությունները շատ հեշ-  
տությամբ բարդվում են և ունեն մեծ կիրառություն, հմմտ.՝  
*գեղմնագգի՝* Մովսես Կաղանկատուացի, ՄՀ, հ. ԺԵ, էջ 232,  
*հայազարմ, հայազն<sup>40</sup>, հայասեռ*. «Որ է ի սեռե հայոց, կամ ի  
սերնոց Հայկայ<sup>41</sup>»: *Ճենագն՝* Խորենացի, ՄՀ, հ. Բ, էջ 1845,  
*քրդագգի՝* Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն Տիեզերա-  
կան, Մոսկվա, 1861, էջ 181, *սառայածին<sup>42</sup>* և այլն: Հանդիպում  
են նաև երկու հատուկ անուններից կազմված բարդ ձևեր՝ ա-  
ծանցված *-ացի* վերջածանցով, հմմտ.՝ *արաբեզգիպտացի՝*  
Աշխարհացոյց, ՄՀ, հ. Բ, էջ 2145, *մարապարսացի՝* «Ոյր  
տոհմն է խառն ի մարաց և ի պարսից<sup>43</sup>»: Բառաբարդումներ  
են նաև հայերենով չմեկնվող որոշ ցեղանուններ, հմմտ.՝  
*լանկուարտ (ագգն Ղանկուարտաց<sup>44</sup>)՝* Խորենացի, ՄՀ, հ. Բ,

---

*կան ցեղանունների իմաստաբանության շուրջ* հոդվածում, որտեղ պար-  
զում է, որ «*ըստ գետոց կոչեցեալ*» արտահայտությունը վերաբերում է  
ողլխինդոր-օնոգուր ցեղին՝ ստուգաբանելով «*սասը գետ*» կամ «*սասզե-  
տացիք*», իսկ աղբյուրում հիշատակված *կուփի, դուչի* և *չար* ցեղանուն-  
ները ստուգաբանում է համապատասխանաբար «*զրահակիրք*», «*նետողք*»  
և «*նիզակակիցք*» (Տե՛ս Бутба В., К семантике болгарских этнонимов  
«Ашхарацуйца» (Опыт реконструкции процесса формирования общности),  
Պատմա-բանասիրական հանդես, 4 (127), Երևան, 1989, էջ 169-180): Այս  
ձևերը կարելի է գուգահեռել *Հոռոմ կոնդորածք՝* Մատթեոս Ուռհայեցի,  
Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 63, կապակցության հետ,  
որտեղ *կոնդորածք (կոնդորատք)* նշանակում է «նիզակակիրներ»:

<sup>40</sup> ՆՀԲ, հ. 2, էջ 29:

<sup>41</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 30:

<sup>42</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 695:

<sup>43</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 217:

<sup>44</sup> Ղանկվարուները՝ Լանգոբարդները կամ Լոնգոբարդներն են (= երկայնա-  
մորուսներ), Սվեվների մի փոքրաթիվ ճյուղը գերմանական ծագումով,  
որոնք մեր թվականության Ա. դարում ապրում էին Էլբայի ձախ ափին.  
այստեղից նրանք հետզհետե տարածվեցին դեպի Դանուբ, Ալպյան լեռներն  
անցան, նվաճեցին Հյուսիսային և միջին Իտալիան, բայց իրենք էլ հետզհե-  
տե ձուլվեցին տեղական ռոմանական ազգաբնակչության հետ, և ութերորդ

էջ 2061: Բարդ ձևեր են նաև «Աշխարհացոյց»-ում հանդիպող ցեղանվանական հետևյալ ձևերը՝ կազմված երկու հասարակ անուններից, հմմտ.՝ *Չազակերք, Չկնակեր Եթեովպացիք, Փրփրեղջիր Եթեովպացիք, Չիակերք, Մարդակերք՝ Աշխարհացոյց, ՄՀ, հ. Բ., էջ 2146, 2149, 2170:*

## О ФОРМАХ ОБРАЗОВАНИЯ НАИМЕНОВАНИЙ ПЛЕМЕН В АРМЯНСКОЙ ЛЕТОПИСИ

*Այկազ Գեորգյան*  
(резюме)

В настоящей работе представлены словообразовательные формы этнонимов, засвидетельствованных в армянской историографии. Согласно принципам словообразующих форм армянского языка, в работе выделены простые, суффиксальные и сложные типы этнонимов. Простые этнонимы – это неделиющиеся, корневые единицы (нпр. мар “мидиец”, гел “житель Гилана”, хай “армянин”, руз “россиянин” и тд.). Суффиксальными формами являются те виды этнонимов, которые состоят из именных и суффиксальных частей. В армянском языке мы выделяли следующие суффиксы, образующие этнонимы: *-аци/-еци/-ци, -и, -ик, -ич, -чик* и указатель множественного числа *-к*. Сложные этнонимы состоят из двух или более именных частей.

---

դարից այս կողմը նրանց անունն այլևս չի հիշվում: Նրանց անունն է կրում այժմ Բուսլիայի մի ընդարձակ նահանգ հյուսիսում՝ Լոմբարդիա (Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, ծան. 177, էջ 362):